

րինակ կրնայ ըլլալ՝ լափոլէոնին մեռած տարին, ամիսը և օրը՝ լափոլէոն մեռաւ 1824 ին, մայիսի 5 ին . այս շաբախ բանը մտքերնիս պահելու տեղը կրնանք ըսել լիս էմ նակ : Որովհետեւ յայտնի է թէ աս դարուս մէջ մեռաւ, դիւրութեան համար 1800 գուրս ձգելով էս բառին սէն կը ցուցընէ մեզի 2 թիւը . էմին մէր 1 ո. որով կ'ըլլայ 1821 . նոյնպէս նակ բառին մէր կը ցուցընէ նայիս ամիսը, իսկ հգիրը 5 թիւը, որով կ'ըլլայ 1821 , մայիսի 5 :

Լայսափ դիւրին ու զուարձալի փորձերը տեսնելով՝ անշուշտ կարդացողին հետաքրքրութիւնը կը շարժի իմանալու թէ արդեօք այսափ ու այս պիսի դիւրին կերպերով չենք կրնարնաւ օտար լեզուներ ալ սորվիլ:

( ) տարլեզու սորվելու համար մասնաւոր կանոնը աս է որ ինչ և իցէ լեզուէ մէկը թէ որ ուզէ բան մը սորվիլ, և մանաւանդ՝ բառեր, ըստ կարի իր գիտցած լեզուին բառերուն մօտեցընէ . ետքը նոյն օտարազգի բառերուն նշանակութիւնը իր լեզուին մէջի նոյն հնչունքն ունեցող բառին նշանակութեանը հետ լաւ կերպով կատէ . ասով թէպէտ բոլոր լեզուն ալ չըլլայ, գէթ շատ բառեր կրնայ սորվիլ :

Իսկ հատուած մը կամ ամբողջ խօսք մը աս գիւտովս բերան ընելանկարելի է, թէպէտ և դիւրութիւններ կուտայ . այսինքն մէկ հատուած մը աղէկ բառ առ բառ բերնուց սորվելին վերջը, թէ որ ուզենք որ մըտքերնէս չելլէ ամենեին, պէտք է նոյն հատուածին մէջի գլխաւոր բառերը իրարու հետ զանազան միջնորդներով կապել . որով ատեն անցնելին վերջն ալ թէպէտ մէջի մնացած երկրորդական բառերը մոռնանք, սակայն ամբողջ իմաստը իր գլխաւոր բառերովը միշտ կը մնայ մեր մտքին մէջ : Իսկ թէ սրբոյն լարդանայ վերջիյորդորը որ իր զօրացը ըրաւ՝ աղէկ մը բերնուց սորվեցայ, որ կ'ըսէ . լաբազում պա-

տերազմունս մտեալ է իմ, և ձեր ընդիս . է ուրեք զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք զի նոքա մեզ յաղթեցին ., և այն : լախ կը դիտեմ թէ աս իմաստին մէջ որոնք են աւելի գլխաւոր բառերը . զոր օրինակ են ասոնք, պարերապէ, յաղթեցայ նշամեացն, յաղթեցին, և այն . ասոնք որ կապելու ըլլամ միջնորդներով, ինչպէս որ ըսինք, գրեթէ անկարելի կ'ըլլայ որ մոռնայ մարդ աս իմաստը :

6 - 1

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ


### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լամեա, և Տէդէռէլինլի լալ ժաշ :

( ) ՍՄԱՆԵԱՆ տէրութեան աս դարուն մէջ շատ անուանի եղաւ լանեա քաղաքը, մանաւանդ լանեայի կուսակալին՝ Տէփէտէլէնլի լալ փաշային գործքերովը . ուստի զուարձալի և օգտակար բան . է թէ աս քաղքին և թէ կուսակալին վրայ ընդհանուր տեղեկութիւն մը ունենալը :

Լանեա՝ քաղաքը լարոպայի Տաճկաստանին լունաւուտլուգ ըսուած գաւառուն մէջ կ'իյնայ . շատ գեղեցիկ դիրք ունի, վասն զի մեծկակ լՃի մը արեմտեան կողմը՝ լաղիւսեան ըսուած գեղեցիկ դաշտերուն մէկ ծայրը շինուած է : Ուշպէտե աս քաղքիս շէնքերը գէշ չեն, բայց ճամբաները նեղութուաթուաթորտ են՝ բաց ՚ի շուկայէն : Լրկու հատ ամուր բերդ ունի, մէկը գէպ ՚ի լիճը երկրոնցած՝ ցամաքին վըրայ, մէկալն ալ քաղաքին մէջտեղը՝ անմերձենալի ժայռի մը վրայ . բգեշին պալատը առջինին մէջն է . Տէփէտէլէնլի լալ փաշան ալ սովորաբար հոն կը բնակէր . ինքը ուրիշ փառաւոր պալատ մըն ալ երկրորդ բեր-

<sup>1</sup> Եւրոպացեր աս քաղաքիս Հաննա կամ Հաննա կը սեն, տեղացեր Եսունիս, որ Յունաց իսկ արև ըսածն է . իբր թէ Յունանիս :



## Լանեա :

Դին մէջ շինել տուաւ եւրոպական ճարտարապետութեամբ : Իս Ալի փաշային ատենը լյանեան Տաճկաստանի ծաղկեալ քաղաքներէն մէկն էր՝ թէ արհեստից և թէ վաճառականութեան կողմանէ . 40,000 բնակիչ ունէր . զանազան դպրոցներ ալ կային սկզբնական գիտութիւններ սորվելու համար , և մէկ հասարակաց վարժարան մը , ուր հին ու նոր լեզուներ , փիլիսոփայութիւն և չափաբերական գիտութիւններ կը սորվեցնէին . բնաբանական գործեաց սըրահ մըն ալ կար ու հասարակաց գրատուն մը բաւական հարուստ : Լյուրոր Ալի փաշան ընկաւ , աս բաներս ալ տակն ու վրայ եղան , և վաճառականութիւնն ու արուեստները որ երթալով կը ծաղկէին՝ բոլորովին խափանուեցան . Իայց վերջը նորէն սկսաւ կամաց կամաց ծաղկիլ , և հի-

մա Տաճկաստանի վաճառաշահ քաղաքներէն մէկն է . նմանապէս արուեստներն ալ օր ըստ օրէ ծաղկելու վրայ են : Ատորին Ալյամնիոյ , Լապիւռոսի , և 1839էն սկսեալ՝ նաև Լարիսսայի կամ Խնիշէհիրի բգեշխութեանը գլխաւոր քաղաքը ասիկայ է , և բնակիչը գրեթէ 30,000 հոգի կը համրեն , մեծ մասը յոյն , մնացածը տաճիկ ու հրեայ : Քունաստանի ուրիշ քաղաքներուն նայելով՝ աս տեղի Հոռմըները քաղմաթիւ են և աւելի կրթեալ . շատերը իրենց որդիքը Լյուրոպայի երեելի համալսարանները կը իրկեն որ բան սորվին . քաղաքացւոց մեծ մասը վաճառականութեան հետ են , որով շատ հարըստցած են , և իրենց վաճառականութիւնը շատ տեղընդարձակած : Կ'երեւնայ թէ Քովչաննէս Լանտակուղենոս կայսրը կամ իր ազգաւ-

կաններէն մէկը շինած է ասքաղաքս . 1424<sup>ին</sup> առաւ սուլդան Այուրատ Բ , Այուրատ Պէյին ձեռքովը : Գանք հիմա Տէփէտէլէնլի Ալի փաշային պատմութեանը , որ ասքաղքիս ամբութեանը ապաւինած՝ քիչ մը ատեն դէմդրաւ օսմանեան դրանը :

Ալի փաշան Ալպանիոյ Տէփէտէլէն քաղաքէն էր , 1750<sup>ին</sup> ատենները ծնած : Իր բնական անգթութիւնը աւելցաւ աւազակաբարոյ հօրը Ալի պէյին ու լիրբ և անգութ մօրը Խամքոյին չար օրինակներովը . այսպէս մեծնալով անզգամութեան ծայրը հասաւ : Իր պապերէն մէկը՝ որ Շամբաներու վրայ աւազակութիւն կ'ընէր՝ Տէփէտէլէն քաղաքին տիրած ըլլալով , անկէ վերջը իր ցեղին մէջ որդւոց որդիի կը ժառանգէին ասքաղաքս . բայց Ալի պէյին թշնամիները ամէն ունեցածն ու չունեցածը ձեռքէն առին , ան ալ սրտին ցաւէն ընկաւ մեռաւ : Ան միջոցին Ալի 13 կամ 14 տարեկան հազիւ կար , և ձեռքէն բան մը չէր դար . բայց մայրը Խամքոյ՝ որդւոյն ժառանգութիւնը ձեռք ձգեց : Երբոր մեծցաւ Ալի , սկսաւ հօրն ու պապերուն արուեստը ձեռք առնուլ . վազեց իր հօրը թշնամեաց երկիրներն ու կողոպտեց . ան ատեն բոլոր թշնամիք մէկտեղ եկած՝ պատերազմի ելան իրեն ու մօրը դէմ , և յաղթուելով ու յաղթելով՝ վերջապէս մայրն ու քոյրը գերի բռնեցին , և բոլոր ունեցածնին առին . Ալին ալ փախաւ , ու երբոր ասդիս անգին ժափառական կը պտըտէր՝ մէկ հին տան մը մէջ բաւական ստակ գտաւ , 2000<sup>ի</sup> չափ մարդ ժողվեց գլուխը , և յաղթանակով Տէփէտէլէն քաղաքը մտաւ . մայրն ու քոյրն ալ թշնամեաց ձեռքէն փախչելով՝ քոյն եկան , ու անդադար զինքը կը գրգուէին որ թշնամիներէն վրէժը առնէ : Ալիին քաջութեանն ու աեսքին համբաւը բոլոր Ալպանիա տարածուեցաւ , և Տէլինէ քաղքին ան ատենի բգեշխը Դափլան փաշան զինքը իրեն փեսայաւ

ցուց : Ալի նորէն գլուխը շատ մը մարդ ժողվելով՝ ելաւ իր հօրը երկիրները բոլոր նորէն ձեռք ձգելու , բայց ան կողմի գլխաւորները դէմն ելան ու բոլոր զօրքերը ջարդեցին . Ալի ալ ստիպուելով հաշտութիւն ըրաւ անոնց հետ : Ետքը նորէն աւազակներու գլուխ անցած դէպ 'ի Եպիոսո , Ակեդոնիա ու Աֆեսաղիա արշաւեց : Պէրաթի բգեշխը՝ Քիւրտ փաշան զօրք իրկեց վրան . ասոնք յաղթեցին զինքը ու գերի բռնեցին , ու քովը որչափ մարդ կար նէ՝ կախեցին , միայն զինքը ազատեցին՝ երիտասարդութեն ու կտրձութել խնայելով :

Երբոր Տէփէտէլէն դարձաւ , թշնամիներուն ձեռքէն ազատելու համար աս վարպետութիւնս ըրաւ : Վովիններէն ոմանց այնպէս ձեացընել տուաւ որ իբր թէ հետը թշնամացեր են , ու իրեն դէմ որոգայթ մը պիտի լարեն . աս տեսնելով թշնամիներն ալ եկան ասոնց հետ միաբանեցան : Ալպանց Ալիին մարդիկը մէկալներէն գաղտուկ այծ մը բռնեցին ու Ալիին հագուստներովը զարգարած՝ անտառին մէջ ծառի մը կապեցին , քոյն ալ քանի մը զինուորները թշնամիները մէջերնին խօսք դրած ատենին ասոր վրան վազեցին , ու ծառին տակինը Ալին կարծելով՝ վրան հրացան պարպեցին : Ան միջոցին քոյն զինուորները մէկէն վրայ վազեցին՝ իբր թէ Ալիին պաշտպանութիւնիտի ընեն . աս որ տեսան թշնամիները ձգեցին փախան . և կարծելով թէ Ալիին բանը լընցաւ , ելան յաղթանակով Տէփէտէլէն մտան . չէին գիտեր որ Ալին իր մօրը տունը պահութեր է : Երբոր ան գիշերը ասոնք հանգիստ հանգարտ ու տելու խմելու նստան , Ալին զօրացը գլուխը անցած՝ ասոնց վրայ ընկաւ , ըսելով թէ ան մեռուցածնիդ ես չէի , հապա այծ մըն էր . և այսպէս մէկ վայրկենի մէջ ցիր ու ցան ըրաւ զանոնք որ իրեն փառացն ու մեծնալուն արգելք կ'ըլլային :

Ուզելով նաև իր աներոջը Պափ-  
լան փաշային ստացուածքը կողոպ-  
տել, օսմանեան դրան ամբաստանեց  
զինքը իրեւ տէրութեան մատնիչ, ու  
սպաննեց, բոլոր ունեցածն ալ ինքը  
առաւ . աս բանիս փոխարէն դուռը  
զինքը Ուումէլի փաշային տեղակալ  
ըրաւ, որով շատ մեծցաւ՝ թէ անու-  
նով և թէ հարստութեամբ : Վւ-  
տրիոյ և Ուուսաց պատերազմներուն  
ատենը 1787<sup>են</sup> Վլի փաշան ( Սոման-  
ցւոց բանակին կողմանէ շատ քաջու-  
թիւններ ըրաւ . ուստի դուռը անոր  
փոխարէն զինքը Ծարչալայի փաշա  
անուանեց, ու Ուումէլի բոլոր Ճամ-  
բաներուն վերակացու դրաւ : Ին ա-  
տենէն սկսաւ 3000<sup>էն</sup> ինչուան 4000<sup>է</sup>  
չափ զինուոր պահել քովը իրեն ստր-  
կովը, ամէնն ալ առնաւուտ :

Ծակետ Ծէփէտէլէն արդէն իրենն  
էր, և Ծաեսսազիոյ իշխանութիւնն  
ալ ձեռքն էր, բայց Վլի փաշան այն-  
չափով գոհ չէր . աչքը Խանեա քա-  
ղաքին վրայ էր, վասն զի անով բոլոր  
Վլապանիոյ վրայ ինքնիշխան կ'ուզէր  
տիրել . աս ուզածն ալ ձեռք ձգեց  
ուրիշ վարպետութեամբ մը : Խրբոր  
ան կողմի մեծերը իրարու հետ կը կը-  
ռուըտէին, Վլին մէջ մտաւ, անոնց-  
մէ մէկ քանին սպաննեց, և Խանեայի  
պարսպին տակը բանակը դրած՝ մե-  
ծամեծ պարգևներով ու խոստմունք-  
ներով բնակչաց մեծ մասը իրեն ձգեց,  
և յորդորեց որ դուռը մարդ իրկեն  
ու ինդրեն որ Խանեայի փաշայու-  
թիւնը իրեն արուի : Դառւուը ընդ-  
հակառակն հրաման խրկեց որ քովի  
մարդիկներն արձրկէ ու ինքն ալ իր  
իշխանութիւնը՝ այսինքն Ծէփէտէլէն  
քաշուի : Ինայց ինքը առաջուց աս  
հրամանը բերողներուն դիմացն ե-  
լաւ, անոնց իրեն դէմ բերած հրո-  
վարտակը փոխեց, ու մէկ ուրիշ հրո-  
վարտակ մը յարմարցուց ուզածին պէս  
ու ձեռուընին տուաւ, որուն մէջ զին-  
քը Խանեայի փաշա կ'անուանէր :  
Խրբոր աս հրովարտակը կարդացուե-  
ցաւ, մեծերը պաղ մնացին . ան ատեն

Վլին ձայնը բարձրացուց, ասկէ վեր-  
ջը զիս Խանեայի փաշա պիտի Ճանչ-  
նաք ըսելով : Վս որ տեսան պէյերը,  
յուսահատեցան ու ալ բան մը չկըր-  
ցան ընել . Վլին մէկէն 'ի մէկ բազ-  
մութեամբ զօրաց և հանդիսով ներս  
մտաւ, ու բոլոր քաղաքը թունդ ե-  
լաւ : Յունաց ու Տաճկաց մեծամեծ-  
ները ժողվեց ու անոնց ստորագրու-  
թեամբը երկրորդ անգամ Պօլիս  
պատգամաւորներ խրկեց որ երթան  
դրան պատմեն Խանեայի ժողովը-  
դեան ուրախութիւնը, որ Վլին պէս  
զօրաւոր փաշա մը տուաւ իրենց, որ  
հասարակաց խաղաղութեանը մեծ  
պաշտպան է, աւազակներուն ահար-  
կու, և օսմանեան դրան հաւատա-  
րիմծառայ : Վս որ լսեց դուռը, հաս-  
տատեց զինքը իր իշխանութեանը  
մէջ ( 1788 ) :

Վլին այսպէս ամէն կողմանէ զօ-  
րացած սկսաւ սրտին մէջ պահած  
վրէժները հանել . նախ Վորմովոյ  
աւանին վրայ վազեց առաւ, մէջի  
բոլոր էրիկ մարդիկը թրէ անցուց,  
տղաքներն ու կնիկ մարդիկը գերի  
ըրաւ՝ ծախեց . բնակիչներէն մէկն ալ  
ատենով իր մօրը Խամքոյին նախա-  
տինք մը ըրած ըլլալով, բռնեց շամ-  
փուրի վրայ անցուց ու խորովեց :

Ինկէ ետքը ուզելով բոլոր Խալիւ-  
ռոսը անկախ տէրութիւն մը ընել,  
ան կողմի փաշաներուն վրայ դրան  
առջեւ սուտ ամբաստանութիւններ  
ըրաւ . ան փաշաներէն մէկը Վուլուի  
բնակիչները ասոր գէմ ոտք հանեց .  
Վլի փաշան անոնց վրայ վազեց, բայց  
չկըրցաւ յաղթել . ուստի առժամա-  
նակեայ զինադադարումն ըրաւ, միտ-  
քը դնելով որ ուրիշ ատեն անոնցմէ  
ալ վրէժը հանէ :

Ին միջոցին Խանեան ամրցուց, իր  
բոլոր հարստութիւնը հօն ժողվեց,  
և ան քաղաքն եղաւ իրեն իշխանու-  
թեան կեդրոնը : Խրբոր Պոնափառ-  
թէն Վւտրիոյ հետ Վամփոփոր-  
միոյի գաշնադրութիւնն ըրաւ ( 1797 ),  
բոլոր Յոնիսական կղզիները և անոնց

մաս սեւպուած ցամաք երկիրները  
Գաղղիացւոց ձեռքն անցան՝ ինչուան  
Լին սահմանները : Եափոլէոն բա-  
րեկամացաւ հետը, յուսալով որ զին-  
քը ձեռք առնելով՝ մտքին մէջ դրած-  
ները կարենայ առաջ տանիւթայց Լ-  
լին ալ անկէ շատ վար չեր մնար վար-  
պետութեն կողմանէ . ուստի ան բա-  
րեկամութիւն առիթ առնելով՝ հրա-  
ման առաւ որ իր քանի մը նաւերովը  
Վորֆուի նեղուցէն անցնի, ու գը-  
նաց Լիվիցա, Ասիլի և ուրիշ ան  
կողմի բոլոր գեղերը առաւ, և աս ա-  
մէն տիրած երկիրներուն տուրքը  
դրան վճարեց :

Խրբոր Գաղղիացիք Լագիպտոս առ-  
նելու գնացին, Լիլ փաշան առաջար-  
կեց դրան որ ո՞չ ափ գաղղիացի կայ  
Անետկոյ ցամաք երկիրն մէջ, ա-  
մէնքն ալ վուրնտէ . երբոր դռնէն հը-  
րամանը առաւ, խաթէութեամբ ա-  
ռաջ Այօզա սպարապետը իրեն կան-  
չեց, իրը թէ բանի մը վրայ պիտի  
խօսի հետը, և գերի բռնեց զինքը .  
անկէ վերջը համարձակ ելաւ տիրեց  
Պութրինթոյի, Փրեվեզայի, Աննի-  
ցայի և բոլոր ան կողմերուն, մէկ  
սաստիկ կոտորածէ մը ետքն ալ Ա-  
զալսէթ անունով զօրավարը գերի  
բռնեց . դուռը աս քաջութիւննե-  
րուն համար Լիլին մէկ սամուրենի  
մը պարգև խրկեց . Լնգլիացւոց Լեւ  
սոն զօրապետն ալ սպայ մը խրկեց որ  
երթայ իր կողմանէ Լիլին ուրախա-  
կից ըլլայ, և միանգամայն ըսէ թէ  
շատ կը փափագի հետը տեսնուելու :

Լիլ փաշան աս ամէն յաղթութիւն-  
ներէն ետև երբոր տեղը դարձաւ,  
միտքը դրաւ որ նորէն Այուլուցոց վը-  
րայ վազէ ու ոխը հանէ . բայց երբոր  
ուզածին պէս բաները ցաղողեցան  
նէ՝ խարդախութեամբ ու մատնու-  
թեամբ ուզածին հասաւ ու տիրեց  
բոլոր անոնց երկիրներուն : Լս յաղ-  
թութեամբս Լիլին անունը շատ  
մեծցաւ դրան դիմացը . վասն զի Այու-  
լուցիները շատ ատենէ ՚ի վեր էր որ  
ինքնագլուխ էին . և դուռը աս բա-

նիս համար Այումէլի փաշայութիւ-  
նը տուաւ իրեն :

Խրբոր Այուսի տէրութիւնը 1805էն  
Գարատաղին տիրեց, որ Լապանիոյ  
հիւսիսային դին կ'իյնայ, Լիլ փա-  
շային աչքը վախցաւ, ուստի ըրաւ ըր-  
րաւ՝ Գաղղիոյ հետ հաշտուեցաւ .  
Եափոլէոն իրեն մեծամեծ պարգե-  
ներ խրկեց, հետը մէկտեղ նաև մէկ  
թագ մը, Փուքվիլ անունով իմաստուն  
գաղղիացին ալ Լանեա Գաղղիոյ  
կողմանէ գեսպան դրաւ : Լս բաներս  
տեսնելով օսմաննեան դուռը, Լե-  
փանթոյի ու Այուայի փաշայութիւն-  
ներն ալ տուաւ Լիլին որդւոցը՝ որ  
կ'ըսուեին Ալիլ և Այուխթար : Լե-  
մենի հաշտութենէն ետև շատ վախ-  
ցաւ Լիլ փաշան որ Այուսի տէրու-  
թիւնը զէնքը իր վրայ ըդարձնէ .  
շատ ետևէ եղաւ որ դուռը Լնգլիոյ  
հետ հաշտուի . ասոր համար Լնգլիոյ  
տէրութիւնը շատ մը հրազէնք պար-  
գեց իրեն, քանի մը հարիւր ալ ա-  
ղէկ ձիեր . հիւպատոս մըն ալ խրկեց  
որ իր կողմանէ Լանեա նստի :

Լնգչափ յաջողութիւններէն ետ-  
քը Լիլ փաշան թագաւորի մը պէս  
զօրք հանեց, գնաց Տէվինէի փա-  
շայութիւնն առաւ, նոյնպէս Լակի-  
րիքասրի ու Վարտիքի քաղաքներն  
ալ առաւ . առջի բերան երկրորդին  
բնակիչները դէմ դրին, բայց Լիլն  
պաշարեց առաւ, և մէջի բնակիչները  
թրէ անցուց : Խրբոր իմացաւ որ  
Գաղղիացիք իրեն դէմ որոգայթներ  
կը լարեն, դրան թոյլտուութեամբը՝  
Եափոլէոնի հետ ունեցած բարեկա-  
մութիւնը ատելութեան փոխեց : Լն-  
գլէ ետքը որովհէտեւ Լապիւռսի բաց-  
արձակ տէրը ինքն էր, սկսաւ թա-  
գաւորական մեծագործութիւնները  
նել . Ճամբաներ բանալ տուաւ, գե-  
ղէր շինեց, բերդեր կանգնեց և զա-  
նազան գործարաններ ալշինել տուաւ:  
Ըատ երևելի Լնգլիացիներ Լանեա  
իրեն տեսութեանը կ'երթային . ա-  
նոնց մէկն ալ եղաւ Լորտ Պայրըն ե-  
րևելի բանաստեղծը . և ասոնց մեծ

Հիւրընկալութիւնկ'ընէր 1816<sup>ի</sup> իրեն տեսութեան եկաւ նսաւ Շուետի կուսթաւ Ռոտով թագաւորը, որ աթոռէն ձգուած էր ու դէպ 'ի Երուսաղէմ ճամբորդութիւն կ'ընէր . Ռլի փաշան շատ պատիւ ըրաւ իրեն, անիկայ ալ Շուետի Կարոլոս ԺԲ թագաւորին թուրը պարգև տուաւ Ռլիին :

Ի՞ն աստիճան հասաւ Ռլի փաշան որ թագաւորէ մը վար չէր մնար . իր որդիքը և թոռները մեծամեծ պաշտօններու մէջ էին, և բարեկամները թագաւոր կը կոչէին զինքը, թէպէտ և ինքը չէ կ'ըսէր : Կամաց կամաց դուռը ասոր վրայ կասկածի սկսաւ երթալ . Փէհլիվան փաշան, որ Ռլիին ոխերիմ թշնամին էր ( վասն զի Ռլին ասոր ալ ունեցածն ու չունեցածը ձեռքէն առեր էր ) դրան առաջարկեց որ Ռլիին վրայ պատերազմի երթայ . իր մարդիկն ալ նախ Ռլիին Ա էլի որդոյն վրայ գնացին, որ ( յաեսսազիոյ փաշա էր, ու Կ յնէպախմիի նաւահանգստին մէջ զինքը արդիլեցին . Ի՞ն ատեն Ռլին զՓէհլիվան փաշան սպան նելուզեց . երկու աւազակ անոր վրայ հրացան պարպեցին, բայց չհանդիպեցաւ . երբոր անոնցմէ մէկը ձեռքընկաւ ու կը տանջէին, շիտակը խոստովանեցաւ՝ թէ Ռլին իրենց յանձներ էր որ Փէհլիվան փաշան սպաննեն : Ի՞ս որ իմացաւ դուռը՝ պատերազմի հրաման հանեց, և աս պատերազմիս գլուխն եղաւ Փէհլիվան փաշան, որ Կանեայի ալ փաշա անուանեցաւ . Ռլի ալ սկսաւ քաջութեամբ պատերազմի պատրաստութիւն տեսնել . և որովհետեւ առաջուց գիտէր Յունաց ապստամբութեան խորհուրդը, ուստի զամէնքն ալ յորդորեց որ ոտք ելլեն . բոլոր { յունաստան, Ալահ ու Ալութաւիա պատգամաւորներ խըրկեց, և զամէնքն ալ ոտք հանեց . բայց ասոնք չուտով ջարդուեցան ( ) սմանցոց զօրքէն, ինքն ալ եօթը ութը հարիւր հոգւով լՃին քովի բերդը փախաւ ու դուռը ձեփեց . հետը եր-

կու հարիւր թնդանօթ ալ տարեր էր, ասոնք բերդին վրայ շարեց, ու անկէ սկսաւ պատերազմիլ : Երբոր օսմանցի զօրքը չկրցան իրեն բան մը ընել, Փէհլիվան փաշան փոխուեցաւ ու տեղը Խուրշիտ Ահմէմմէտ փաշան եկաւ . ան ալ բան մը չկրցաւ ընել, և իր բանակին փախստայկանները տեսնելով՝ ելաւ Ռլիթա քաշուեցաւ, ինչուան որ ուրիշ զօրք գայ իրեն օգնութեան : Ի՞ն միջոցին Ռլի փաշան իրեն հետ վեց հազար Խուլուցի միաթանեց, որ կտրիճ պատերազմող էին, և անդադար { յոյներն ալ ( ) սմանցոց դէմկը գրգռէր . բայց Խուրշիտ փաշան ալ զինքը շատ կը նեղէր, և իրեք ամիսէն բերդին մէկ կողմը փլուց՝ անդադար թնդանօթ նետելով :

Ռլի փաշային քովինները նեղը մըտած՝ կը ստիպէին զինքը որ անձնատուր ըլլայ . մէկ կողմանէ ալ Խուրշիտ փաշան զինքը կը քաջալերէր ու յոյս կուտար որ անձնատուր ըլլայ նէ՝ իրեն մնաս մը ըներ . ան ատեն Ռլին բերդը Խուրշիտին ձեռքը տուաւ ու ինքը ելաւ լՃին մէջ կզզի մը քաշուեցաւ, ինչուան որ դոնէն թողութիւն գայ՝ ինչպէս Խուրշիտ փաշան կը խոստանար : Իրեք օրէն դըռնէն իրեն մահուան դատակնիքն եկաւ . աս որ տեսաւ Ռլին, լեցուն հրացանները ձեռքը առաւ ու ըսաւ . “ Վ ողորմելիներ, այդչափ ված կը կարծէք զիս „ . հոն սպաններէն մէկը զարկաւ սպաննեց, սպարապետն ալ վիրաւորեց . բայց նոյն միջոցին ինքն ալ ընկաւ՝ վրան նետուած գնտակներէն զարնուելով, և ան գիշերը, որ էր 5 ֆետրուարի, 1822, գլուխը դրան խրկեցին :